

## Տնտեսական դատարանների համակարգը Բելոռուսի Հանրապետությունում

1991թ. հունիսի 5-ին ընդունվել է «Բելոռուսիայի ԽՍՀ տնտեսական դատարանների մասին» օրենքը, որը գործողության մեջ է դրվել 1991թ. հուլիսի 1-ից: Միաժամանակ Բելոռուսում լուծարվեցին պետական արբիտրաժը և նախարարությունների, պետական կոմիտեների և գերատեսչությունների արբիտրաժները: Տնտեսական դատարանների գործունեության դատավարական հիմքը դարձավ Բելոռուսական ԽՍՀ-ի Տնտեսական դատավարության օրենսգիրքը, որը նույնպես ուժի մեջ է մտել 1991թ. հուլիսի 1-ից:

Նշված օրենքների ընդունումը չէր կարելի դիտարկել սուկ որպես արբիտրաժների հասարակ փոխարինում տնտեսական դատարաններով: Դա պետության գիտակցված և հիմնավորված քայլ էր՝ ուղղված դատական իշխանության ինքնուրույն ճյուղի ամրապնդմանը և նրա գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Այս քայլը կանխորոշված էր տնտեսական նոր պայմաններով, որոնց առկայության դեպքում տնտեսական հարաբերությունների հիմնական կարգավորիչներ են դառնում օրենքը և պայմանագիրը: Ուստի անհրաժեշտություն էր առաջացել այնպիսի դատարանների, որոնք պետական արբիտրաժների դրական փորձի (տնտեսական վեճերի քննության օպերատիվությունը, իրավահարաբերությունների առանձնահատկություն և այլն) հաշվառմամբ, հատուկ դատավարական օրենսգրքի հիման վրա կլուծեին ձեռնարկատերերի միջև, ինչպես նաև ձեռնարկատերերի և պետական մարմինների միջև առաջացած վեճերը, ընդ որում՝ վիճող կողմերին իրենց խախտված կամ վիճարկվող իրավունքների և շահերի պաշտպանության համար տրամադրելով հավասար հնարավորություններ:

Բելոռուսի Հանրապետության 1994թ. Սահմանադրությամբ սահմանվեց տնտեսական դատարանների՝ որպես դատական իշխանության ինքնուրույն ճյուղի դերը: Մասնավորապես, դրանում ամրագրված է պետական իշխանության տարանջատման սկզբունքը՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների, արձանագրված է, որ դատական իշխանությունը պատկանում է դատարաններին, իսկ դատական համակարգը կառուցվում է տարածքային և մասնագիտացվածության սկզբունքների հիման վրա: Դատական համակարգը Բելոռուսի Հանրապետության Սահմանադրությամբ ներկայացված է որպես հավասար և ինքնուրույն դատարանների եռանդամ համակարգ՝ Սահմանադրական դատարան, ընդհանուր իրավասության դատարաններ և տնտեսական դատարաններ:

Տնտեսական դատարանների՝ օրենքով սահմանված խնդիրներն են՝

1. ձեռնարկատիրության և այլ տնտեսական գործունեության ոլորտում կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքների և օրենքով պահպանվող շահերի պաշտպանությունը արդարադատության իրականացման միջոցով:

2. արդարադատություն իրականացնելիս օրենսդրության ճիշտ և միատեսակ կիրառումը:

3. ձեռնարկատիրության և այլ տնտեսական գործունեության ոլորտում օրինականության ամրապնդումը և իրավախախտումների նախազգուշացումը:

Ներկայումս տնտեսական դատարանների գործունեությունը կարգավորող հիմնական նորմատիվ իրավական ակտերն են հանդիսանում «Բելոռուսի Հանրապետության տնտեսական դատարանների մասին» 1998թ. դեկտեմբերի 9-ի օրենքը (այսուհետև՝ Օրենք) և Բելոռուսի Հանրապետության 1998թ. դեկտեմբերի 15-ի տնտեսական դատավարության օրենսգիրքը (այսուհետև՝ Օրենսգիրք):

Տնտեսական դատավարությունը իրականացվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1. Դատավորների անկախությունը և նրանց ենթարկվելը միայն օրենքին.
2. Հավասարությունը օրենքի և տնտեսական դատարանի առաջ.
3. Մրցակցությունը և կողմերի իրավահավասարությունը.
4. Գործերի քննության հրապարակայնությունը.
5. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը.
6. Միջազգային պայմանագրերի գերակայությունը.
7. Օտարերկրյա իրավունքի նորմեր կիրառելու հնարավորությունը.
8. Դատական ակտերի պարտադիր լինելը.
9. Այլ սկզբունքներ:

Տնտեսական դատարան դիմելու իրավունք ունեն իրավաբանական անձիք և առանց իրավաբանական անձ կազմավորելու ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ ունեցող քաղաքացիները: Բելոռուսի Հանրապետության օրենսդրական ակտերով նախատեսված դեպքերում նման իրավունք ունեն նաև այլ կազմակերպություններ (իրավաբանական անձ չհանդիսացող) և քաղաքացիներ (որոնք չեն հանդիսանում անհատ ձեռնարկատեր), ինչպես նաև դատախազը, պետական այլ մարմիններ: Մասնավորապես, 2000թ. ընթացքում տնտեսական դատարաններում տարբեր սուբյեկտների կողմից ներկայացվել է շուրջ 14 հազար հայցադիմում և դիմում:

Իրենց իրավասության շրջանակներում խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար Բելոռուսի Հանրապետության տնտեսական դատարաններ դիմելու իրավունք ունեն օտարերկրյա միջազգային կազմակերպությունները, օտարերկրյա պետությունների քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետև՝ օտարերկրյա անձինք): Ընդ որում՝ օտարերկրյա անձինք Բելոռուսի Հանրապետության կազմակերպությունների և քաղաքացիների հետ ունեն հավասար դատավարական իրավունքներ և կրում են դատավարական պարտականություններ, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ, այդ թվում՝ Բելոռուսի Հանրապետության միջազգային պայմանագրերով (Օրենսգրքի 306-րդ հոդված): 2000թ., մասնավորապես, Բելոռուսի տնտեսական դատարաններում ստացվել են օտարերկրյա ձեռնարկությունների և օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների 402 դիմում՝ իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով: 254 գործով նշված սուբյեկտները հանդես են եկել որպես պատասխանողներ:

Օտարերկրյա անձանց մասնակցությամբ արդարադատություն իրականացնելիս տնտեսական դատարանները ղեկավարվում են միջազգային պայմանագրերի գերակայության, օտարերկրյա պետությունների դատարանների և այլ իրավակիրառող մարմինների իրավագործությունը պահպանելու և փոխադարձության սկզբունքներով:

Օտարերկրյա կազմակերպության դատավարական իրավունակությունը որոշվում է օտարերկրյա այն պետության օրենքով, որտեղ այն հիմնադրված է: Նույնիսկ նշված օրենքի

համաձայն դատավարական իրավունակություն չունեցող օտարերկրյա կազմակերպությունը Բելոռուսի օրենսդրության համաձայն կարող է ճանաչվել իրավունակ Բելոռուսի Հանրապետության տարածքում:

Օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերով տնտեսական դատարանի իրավասության որոշման ընդհանուր կանոն է հանդիսանում Բելոռուսի Հանրապետության տարածքում պատասխանող կազմակերպության գտնվելը կամ պատասխանող քաղաքացու բնակվելը: Բացի այդ, տնտեսական դատարանները իրավասու են քննել օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերն այն դեպքում, երբ՝

ա) օտարերկրյա անձի մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը գտնվում է Բելոռուսի Հանրապետության տարածքում.

բ) եթե պատասխանողը Բելոռուսի Հանրապետության տարածքում ունի գույք, որի կապակցությամբ ծագել է վեճ.

գ) հայցը հիմնվում է այն պայմանագրի վրա, որի կատարումը պետք է իրականացվի կամ իրականացվել է Բելոռուսի Հանրապետության տարածքում.

դ) գույքին պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործով գործողությունը կամ այլ հանգամանքը, որը հիմք է հանդիսացել պատճառված վնասը հատուցելու պահանջ ներկայացնելու համար, տեղի է ունեցել Բելոռուսի Հանրապետության տարածքում.

ե) հայցը բխում է անհիմն հարստացումից, որը տեղի է ունեցել Բելոռուսի Հանրապետության տարածքում:

Օտարերկրյա անձի մասնակցությամբ գործի ընդդատությունը Բելոռուսի Հանրապետության տնտեսական դատարանին կամ այլ պետության դատարանին կարող է որոշվել կողմերի համաձայնությամբ: Նման ընդդատության մյուս կանոնները շարադրված են Օրենսգրքի 310-րդ հոդվածում:

Բելոռուսի Հանրապետության տնտեսական դատարան օտարերկրյա պետության նկատմամբ հայց ներկայացնելը, վերջինիս որպես երրորդ անձ գործին մասնակից դարձնելը, օտարերկրյա պետությանը պատկանող և Բելոռուսի Հանրապետության տարածքում գտնվող գույքի վրա կալանք դնելը, տնտեսական դատարանի որոշման հարկադիր կատարման կարգով այդ գույքի վրա բռնագանձում տարածելը թույլատրվում է միայն համապատասխան պետության իրավասու մարմինների համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ Բելոռուսի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հանրապետության տնտեսական դատարանները իրականացնում են առանձին դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ օտարերկրյա դատարանների հանձնարարությունները (ծանուցագրերի և այլ փաստաթղթերի հանձնում, գրավոր ապացույցների ձեռք բերում, տեղազնություն և այլն), եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ (Օրենսգրքի 313-րդ հոդված):

Օտարերկրյա դատարանների որոշումները Բելոռուսի Հանրապետության տարածքում ճանաչվում և ի կատար են ածվում, եթե դա նախատեսված է օրենսդրությամբ, այդ թվում՝ միջազգային պայմանագրերով, կամ փոխադարձության սկզբունքի հիման վրա:

Տնտեսական դատարանների միասնական համակարգը կազմված է Բելոռուսի Հանրապետության Բարձրագույն տնտեսական դատարանից, մարզերի և Մինսկ քաղաքի տնտեսական դատարաններից, ինչպես նաև մասնագիտացված դատարաններից (անվճարունակության, հողային, հարկային և այլ վեճերի վերաբերյալ գործերով):

Մասնագիտացված դատարանները անհրաժեշտության դեպքում կազմավորվում են Բելոռուսի Հանրապետության նախագահի կողմից՝ Բելոռուսի Հանրապետության բարձրագույն տնտեսական դատարանի նախագահի ներկայացմամբ:

Բելոռուսի Հանրապետության Բարձրագույն տնտեսական դատարանը գլխավորում է տնտեսական դատարանների համակարգը, պատասխանատվություն է կրում տնտեսական դատարանների վրա դրված պարտականությունների կատարման համար, ինչպես նաև նրանց կազմակերպման, վիճակի և գործունեության կատարելագործման համար: Այն նաև հանդիսանում է բարձրագույն դատական մարմին դատարանների կողմից քննվող տնտեսական վեճերով և այլ գործերով, ինչպես նաև իրականացնում է դատական վերահսկողություն վերջիններիս գործունեության նկատմամբ:

Բելոռուսի Հանրապետության բարձրագույն տնտեսական դատարանն օժտված է լայն լիազորություններով, որոնք շարադրված են Օրենքում: Մասնավորապես, այն լիազորված է առաջին աստիճանի կարգով քննության առնել այն գործերը, որոնք վերապահված են տնտեսական դատարանների ընդդատությանը, հսկողական կարգով քննության առնել տնտեսական դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ բերված բողոքների վերաբերյալ գործերը, վերանայել տնտեսական դատարանների կողմից ընդունված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը նոր ի հայտ եկած հանգամանքների ուժով, Սահմանադրությանը, Բելոռուսի Հանրապետության կողմից վավերացված միջազգային իրավական ակտերին և այլ օրենսդրական ակտերին նորմատիվ ակտի համապատասխանության մասին եզրակացություն տալու առաջարկությամբ դիմել Բելոռուսի Հանրապետության Սահմանադրական դատարան, ուսումնասիրել և ընդհանրացնել ձեռնարկատիրական և տնտեսական այլ գործունեության ոլորտի հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը տնտեսական դատարանների կողմից կիրառելու պրակտիկան, պարզաբանումներ տալ դատական պրակտիկայի հարցերի վերաբերյալ, առաջարկություններ մշակել օրենսդրության կատարելագործման վերաբերյալ և այլն:

Բելոռուսի Հանրապետության բարձրագույն տնտեսական դատարանը իր գործունեությունը իրականացնում է հետևյալ կազմով.

1. Պլենում.
2. Նախագահություն.
3. Տնտեսական դատարանների որոշումների օրինականության ստուգման հարցերով կոլեգիաներ.
4. Առանձին կատեգորիայի վեճերը լուծող դատական կոլեգիաներ:

Պլենումը լուծում է տնտեսական դատարանների գործունեության հետ կապված կարևորագույն հարցերը: Դրա կազմի մեջ մտնում են Բարձրագույն տնտեսական դատարանի նախագահը, նրա տեղակալները, Բարձրագույն տնտեսական դատարանի դատավորները, մարզերի և Մինսկ քաղաքի տնտեսական դատարանների նախագահները: Պլենումի աշխատանքներին իրավունք ունեն մասնակցել պետության բարձրագույն իշխանության մարմինների պաշտոնատար անձինք՝ Բելոռուսի Հանրապետության նախագահը և նրա ներկայացուցիչը, Ազգային ժողովի պալատների նախագահները, վարչապետը, Սահմանադրական դատարանի և Գերագույն դատարանի նախագահները, գլխավոր դատախազը, Պետական վերահսկողության կոմիտեի նախագահը, Արդարադատության նախարարը և նրաց տեղակալները: Նիստերին կարող են հրավիրվել տնտեսական

դատարանների դատավորները և աշխատակազմի մասնագետները, պետական այլ մարմինների, գիտական հաստատությունների, այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, Բարձրագույն տնտեսական դատարանին կից գիտախորհրդատվական խորհրդի անդամներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ: Նշված անձինք հրավիրվում են Բարձրագույն տնտեսական դատարանի նախագահի կողմից:

Պլենումի լիազորությունները ընդարձակ են:

Այն քննում է՝

- տնտեսական դատարանների գործունեության կոորդինացման հետ կապված հարցերը.
- տնտեսական վեճերի լուծման պրակտիկայի և դատական վիճակագրության ուսումնասիրության և ընդհանրացման նյութերը, դատական մեկնաբանման կարգով պարզաբանումներ է տալիս օրենսդրության կիրառման հարցերի վերաբերյալ.
- հսկողական կարգով քննության է առնում Նախագահության որոշումների դեմ բերված բողոքները.
- քննության է առնում այն գործերով կայացված դատական ակտերի վերանայման մասին զանգատերը, որոնցով Պլենումը որոշումներ է կայացրել նոր ի հայտ եկած հանգամանքներով.
- քննության է առնում Բելոռուսի Հանրապետության սահմանադրությանը, Բելոռուսի Հանրապետության կողմից վավերացված միջազգային իրավական ակտերին, այլ օրենսդրական ակտերին Պլենումի պարզաբանումների անհամապատասխանության մասին Սահմանադրական դատարանի եզրակացությունները:

Պլենումի իրավասությունների մեջ մտնում է նաև Սահմանադրական դատարան դիմելու հարցի լուծումը՝ Բելոռուսի Հանրապետության Սահմանադրությանը, Բելոռուսի Հանրապետության կողմից վավերացված միջազգային իրավական ակտերին, այլ օրենսդրական ակտերին նորմատիվ ակտի համապատասխանության մասին եզրակացություն տալու առաջարկությամբ: Պլենումը իրականացնում է նաև այլ լիազորություններ:

Պլենումը հրավիրվում է ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան չորս ամիսը մեկ անգամ: Այն իրավագոր է հարցեր լուծել իր անդամների մեծամասնության ներկայության դեպքում: Պլենումը իր իրավասությանը վերապահված հարցերով ընդունում է որոշումներ, որոնք ընդունվում են նիստին մասնակցող անդամների ընդանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Որոշումները ստորագրվում են նիստը նախագահողի և Պլենումի քարտուղարի կողմից:

Նախագահության կազմի մեջ մտնում է դատարանի նախագահը, նրա երեք տեղակալները և բարձրագույն տնտեսական դատարանի հինգ դատավորներ: Նախագահության նիստերին իրավունք ունեն մասնակցել գլխավոր դատախազը կամ նրա տեղակալները: Բարձրագույն տնտեսական դատարանի նախագահի հրավերով նախագահության նիստերին կարող են մասնակցել տնտեսական դատարանների դատավորները, մասնագետները և այլ անձինք:

Նախագահությունը իրավագոր է հարցերը լուծել իր անդամների մեծամասնության ներկայության դեպքում: Նախագահությունը ընդունում է որոշումներ: Որոշումները ընդունվում են նախագահության ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Նախագահության լիազորությունները նախատեսված են օրենսդրությամբ: Մասնավորապես, այն իրավունք ունի՝

- քննել տնտեսական դատարանների որոշումների օրինականության ստուգման կարգով ընդունված Բարձրագույն տնտեսական դատարանի որոշումների դեմ բերված բողոքները և գանգատները.
- քննել այն գործերով կայացված դատական ակտերը վերանայելու մասին դիմումները, որոնցով Բարձրագույն տնտեսական դատարանի կոլեգիայի կողմից ընդունվել են որոշումներ նոր ի հայտ եկած հանգամանքների ուժով.
- լուծել Սահմանադրական դատարան դիմելու հարցը՝ Բելոռուսի Հանրապետության Սահմանադրությանը , Բելոռուսի Հանրապետության կողմից վավերացված միջազգային իրավական ակտերին, այլ օրենսդրական ակտերին նորմատիվ ակտի համապատասխանության վերաբերյալ եզրակացություն տալու առաջարկությամբ.
- լուծել այլ հարցեր:

Նիստերի նախապատրաստման և անցկացման, որոշումների ձևակերպման և դրանց կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու կանոնները սահմանվում են Բելոռուսի Հանրապետության Բարձրագույն տնտեսական դատարանի նախագահության Կանոնակարգով, որը հաստատվում է Պլենումի կողմից:

Բելոռուսի Հանրապետության Բարձրագույն տնտեսական դատարանի դատական կոլեգիաները գլխավորում են նախագահները, որոնք ի պաշտոնե հանդիսանում են Բարձրագույն տնտեսական դատարանի նախագահի տեղակալները: Անհրաժեշտության դեպքում Բարձրագույն տնտեսական դատարանի նախագահը կամ նրա առաջին տեղակալը իրենց կարգադրությամբ դատավորին կարող են դատական մեկ կոլեգիայից ներգրավել մեկ այլ դատական կոլեգիայի կազմում՝ գործ քննելու համար:

Բելոռուսի Հանրապետության Բարձրագույն տնտեսական դատարանի լիազորությունների մեջ են մտնում՝

- գործերի քննությունը առաջին ատյանի, հսկողական ատյանի կարգով և նոր ի հայտ եկած հանգամանքներով.
- Блп ЗсєтЭу գ6сН6хЭє6хГБиИЭ 6хXX6хГБи6хЭЭєсЗ пЭпєлпИиЭ №иmiciЭЭєсЗ №иmиПиЭ єсiПпЗПиЫЗ 6хл6хИЦЭиЛЗс6хИЦБ È иИЦч6ч6хИЦБ.
- դատական վիճակագրության վերլուծությունը, օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակումը, ինչպես նաև օրենսդրական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

єиmиПиЭ П6ИєգЗиЭєсЗ ЭЗлпєсЗ иЭуПиуИЦиЭ, 6с6Я6хИЦЭсЗ БЭ№6хЭИЦиЭ, №сiЭу ПиmиИЦиЭ ЭПипИЦиИЦр СлП6Х6хГБи6хЭ ЗсiПиЭиуЭєИ6х ПiсգБ È иЫИ Сiсyєс мiСИЦиЭн6хИЦ єЭ пЭпєлпИиЭ №иmиic6хГБиИЭ ысєтЭл№с6хГБиИИЦр:

Դատական կոլեգիաներում համապատասխան դատական կոլեգիայի կազմի մեջ մտնող դատավորներից կոնկրետ գործերի քննության համար կարող են կազմավորվել դատական կազմեր: Բելոռուսի Հանրապետության մարզերոում գործում են մարզային տնտեսական դատարանները: Մարզի տնտեսական դատարաններին իր կարգավիճակով հավասարեցված է Մինսկ քաղաքի տնտեսական դատարանը:

Մարզի տնտեսական դատարանը կազմված է այդ դատարանի մեջ մտնող դատավորներից, այդ թվում՝ դատարանի նախագահը և նախագահի տեղեկալները, ինչպես նաև աշխատակազմը:

Մարզի տնտեսական դատարանը գործում է հետևյալ կազմով՝

1. դատական կոլեգիաներ
2. վճռաբեկ ատյան
3. հսկողական ատյան:

Մարզի տնտեսական դատարանի իրավասությունը սահմանվում է օրենսդրությամբ: Մասնավորապես, նշված դատարանները իրավագոր են.

- գործերը քննել առաջին ատյանի և վճռաբեկության կարգով, ինչպես նաև հսկողական կարգով և նոր ի հայտ եկած հանգամանքների ուժով.
- ուսումնասիրել և ընդհանրացնել դատարանի դատական պրակտիկան, վերլուծել դատական վիճակագրությունը.
- առաջարկություններ նախապատրաստել ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեության ոլորտի իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.
- օրենսդրական ակտերին համապատասխան իրականացնել այլ լիազորություններ:

**ՐԾԽՑԻՅՅԷՆ ՍԻՅԾՃՄԻԿԻՅ**

ՀՀ տնտեսական դատարանի նախագահ,  
ԱՊՀ տնտեսական դատարանի պլենումի անդամ